

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՌՈՒԲԻՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ը ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Ռուբինա Մխիթարյանս, աշխատելով որպես ՀՀ արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության փորձագետ, 2020 թվականի մարտի 11-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 14-ը կատարել եմ հետևյալ աշխատանքները.

➤ Մշակել եմ «Պրոբացիայի ծառայության շահառուի ռիսկի նախնական գնահատման գործիքի ձևանմուշի հաստատման և կիրառման մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագիծը:

➤ Մշակել եմ և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը,

➤ Մշակել եմ և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի N 350-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

➤ Մշակել եմ իրավական ակտերի մի շարք նախագծեր («Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մաքսային ծառայության մասին»

օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քննչական կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր, «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի կիրարկմանն ուղղված իրավական ակտեր և այլն)՝ խմբագրելով դրանք ըստ անհրաժեշտության:

➤ Ուսումնասիրել եմ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ կատարած այցի վերաբերյալ տեղեկանքը: Ըստ այդմ՝ համակարգել և պատրաստել եմ այցի արդյունքների վերաբերյալ ամբողջական պատասխան, որն ուղարկվել է Մարդու իրավունքների պաշտպանին:

➤ Կազմել եմ ՀՀ արդարադատության նախարարության կողմից միջազգային կառույցներին ուղարկվող պաշտոնական նամակների նախագծեր:

➤ 2020 թվականի հուլիսի 9-10-ը մասնակցել եմ «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի իմպլեմենտացման

հիմնախնդիրների շրջանակներում կազմակերպված՝ տեխնիկական աջակցման աշխատանքային խմբի կոնֆերանսին:

➤ Ուսումնասիրել եմ միջազգային փորձ և ըստ այդմ՝ ներկայացրել եմ ամփոփ տեղեկանքներ և վերլուծություններ տարբեր իրավական հարցերի և հիմնախնդիրների կապակցությամբ:

➤ Պատասխանել եմ հասարակական կազմակերպություններից, պետական մարմիններից ստացված ընթացիկ գրություններին:

➤ Պատասխանել եմ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ուղարկված գրություններին, ընդհանուր առմամբ՝ 76 գրության:

➤ Պատասխանել եմ քաղաքացիների (այդ թվում՝ դատապարտյալների և կալանավորված անձանց) կողմից ուղարկված գրություններին, ընդհանուր առմամբ՝ 92 գրության:

➤ Կատարել եմ միջազգային փորձի, ներպետական համակարգի հիմնախնդիրների ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում կազմել եմ համապատասխան վերլուծական տեղեկանքներ և նախագծեր Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1717-L որոշման Հավելված N 2-ով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարության իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների» ծրագրի, մասնավորապես՝ ծրագրի 52.4-րդ, 19.1-րդ, 9.1-րդ, 40.2-րդ, 41.1-րդ, 40.3-րդ, 9.2-րդ, 33.1-րդ, 38.2-րդ, 19.2-րդ, 3-րդ կետերի շրջանակներում:

Հարգանքով՝

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՌՈՒԲԻՆԱ

14.09.2020 թ.